



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 15 » 09 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0174-21

**Ձեռնարկողը՝**

«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ  
Լոռու մարզ, Ղուրսալի համայնք

**Գործունեությունը՝**

Ղուրսալի խաչակապի ավազակույճային խառնուրդի  
հանքավայրի Ղուրսալի 3 տեղամասի հարավային թևի  
արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվեկրկություն  
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0174-21

< 15 > 09 2021թ.

Լոռու մարզի Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի  
Ղուրսալի 3 տեղամասի հարավային թևում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա  
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Լոռու մարզ, Ղուրսալ համայնք

**Ներածական մաս.** Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3 տեղամասի հարավային թևում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3 տեղամասի հարավային թևի տարածքը վարչատնտեսական առումով գտնվում է Լոռու մարզի Ղուրսալի համայնքում, Սպիտակ քաղաքից 5 կմ արևելք, Սարալ գյուղից 2.7կմ դեպի արևմուտք և Քարածոր գյուղից 1.4կմ, հարավ-արևելք, Ղուրսալի գյուղից դեպի հյուսիս, ընկերության ջարդիչ-տեսակավորող արտադրամասի հարևանությամբ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 03.11.2020թ թիվ 1559-Ա հրամանով, հաշվետվության հեղինակների կողմից առաջարկվող սահմաններում, C1 կարգով, որպես դինամիկ վերականգնվող, հետևյալ քանակությամբ՝ ստատիկ պաշարներ 142.94հազմ<sup>3</sup>, վերականգնվող պաշարներ /1 միավոր վերականգնման գործակցով՝ ընդհանուր 142.94 հազմ<sup>3</sup>/ տարի և տեսակարար 70.4հազմ<sup>3</sup>/հա. տարի:

Թույլատրելի է համարվել ստատիկ պաշարների անմիջական օգտագործումը շինարարական ավազի /ՀՍ ԳՕՍՏ 8736-2014/ և կոպճի ու խճի /ՀՍ ԳՕՍՏ 8267-95/ արտադրության համար, իսկ վերականգնվող պաշարների օգտագործումը՝ դրանց համապատասխան լաբորատոր փորձարկումների





դրական արդյունքների դեպքում:

Նուրսալի 3 տեղամասի հարավային թևի ԱԿԽ-ի հանքավայրի ծայրակետային կորոդինատներն են՝ ARMWGS-84 կորոդինատային համակարգով.

X1 – 4522625	Y1 – 8443140
X2 – 4522653	Y2 – 8443224
X3 – 4522649	Y3 – 8443345
X4 – 4522605	Y4 – 8443486
X5 – 4522583	Y5 – 8443435
X6 – 4522568	Y6 – 8443301
X7 – 4522571	Y7 – 8443208

Հանքավայրի բարենպաստ լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները հանարավորություն են տալիս հանքավայրի մշակումը բաց լեռնային աշխատանքներով:

Սույն նախագծով նախատեսվում է առաջին հերթին շահագործել հանքավայրի ստատիկ պաշարները, որից հետո հետագայում դինամիկ պաշարները:

Առաջին հերթին արդյունահանվող ստատիկ պաշարների եզրագծված սահմանները ունեն հետևյալ պարամետրերը.

- առավելագույն երկարությունը – 320մ,
- առավելագույն լայնությունը – 85մ,
- մշակման միջին խորությունը – 7,71մ,
- օտարվող տարածքը – 2,0հա,
- օգտակար հաստաշերտի միջին հզորությունը – 7,03մ,
- օգտակար հաստաշերտի մշակվող հզորությունը – 6,93մ,
- օգտակար հաստաշերտի ստատիկ հաշվեկշռային պաշարները –142940մ<sup>3</sup>,
- օգտակար հանածոյի ստատիկ արդյունաբերական պաշարները – 119530մ<sup>3</sup>
- ստատիկ պաշարների ծառայման ժամկետը – 119530:8000=14,9տարի
- օգտակար հանածոյի դինամիկ արդյունաբերական պաշարները – /20-14,9/x8000=40800մ<sup>3</sup>
- ընդհանուր արդյունահանվող պաշարները – 160330մ<sup>3</sup>
- մակաբացման ապարների արդյունահանվող քանակը – 4704մ<sup>3</sup>
- մակաբացման միջին գործակիցը – 4704:119530=0,04մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման ժամանակ նախագծային օգտակար կորուստները որոշվում են ըստ երկու խմբերի:

I. Կորուստները, որոնք մնում են բացահանքի կողերի բնամասերում: Այդ կորուստները կազմում են 16300մ<sup>3</sup>:

II. Շահագործողական կորուստներ: Տվյալ դեպքում նրանք պայմանավորված են օգտակար հանածոն աղտոտումից զերծ պահելու նպատակով հատակում մոտ 10սմ հզորությամբ շերտ թողնելու պայմանից: Այդ կորուստները կազմում են 1960մ<sup>3</sup>: Ընդհանուր կորուստները կազմում են 18260մ<sup>3</sup> կամ 10.2%:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը համաձայն տեխնիկական առաջադրանքի ընդունված է 8000մ<sup>3</sup> ԱԿԽ զանգված:

ԱԿԽ-ի արդյունահանման աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել աշխատանքների սեզոնային ռեժիմով: Աշխատանքային օրերի քանակը սեզոնում ընդունված է 190 օր:



Բացահանքի բացումը կայանում է տեղամասի հարավ-արևելյան սահմանում կտրող խրամի անցմամբ: Կտրող խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 2մ, միջին խորությունը – 6,93մ, երկարությունը 60մ, ծավալը 414,0մ<sup>3</sup>:

Սրանք ընդգրկում են՝

- մակաբացման ապարների հեռացումը – 170մ<sup>3</sup>, (710 մ<sup>2</sup>)

- կտրող խրամի անցում -1050մ<sup>3</sup>,

- արդյունաբերական հրապարակի կառուցում - 100մ<sup>3</sup>,

1-2 կետերի աշխատանքները կատարվում են պարբերաբար, ամեն աշխատանքային տարվա ակգբում:

Բացահանքի մակաբացման ապարները ներկայացված են այլովիալ առաջացումներով: Նրանց միջին հզորությունը կազմում է 0,24մ:

Մակաբացման ապարները բուլդոզերով մշակվում, տեղափոխվում են 10-15մ հեռավորության վրա ու կուտակվում: Այնուհետև կուտակված ապարները էքսկավատորով բարձրվում են ավտոինքնաթափի մեջ, տեղափոխվում են ու բեռնաթափվում բացահանքի հյուսիսային սահմանին զուգահեռ ձևավորվող արտաքին լցակույտ:

Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է միայն բացահանքի ստատիկ պաշարների արդյունահանման ժամանակ: Մնացած տարիներին մակաբացման ապարները (դինամիկ պաշարների արդյունահանման տարիներին) բացակայում են:

Ընդունվում է միակողանի համատարած մշակման համակարգ ընդլայնական ընթացքաշերտերով: Այդ նպատակով սկզբում անց է կացվում կտրող խրամ, որից սկսվում է խառնուրդի հանումը 6մ լայնությամբ ընթացքաշերտերով:

Օգտակար հաստաշերտը մշակվում է ռեյնֆին զուգահեռ երկու ենթաստիճանով, որոնք հետագայում սեղանի վերջում միանում են իրար (կրկնապատկվում են):

Ընդունված մշակման համակարգը ունի հետևյալ պարամետրերը՝

- ենթաստիճանի բարձրությունը ~ 3,5մ,
- աստիճանի բարձրությունը միջինը – 6,93մ,
- աստիճանի թեքության անկյունը – 450,
- ընթացքաշերտի լայնությունը -6մ,
- աշխատանքային անվտանգ գոտու շառավիղը -9մ,
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը-20մ,
- լեռնային աշխատանքների ուղղությունը –հարավից հյուսիս:

Հատակում կավավազների հետ չխառնվելու նպատակով թողնվում է 10սմ հաստությամբ ԱԿԳԽ-ի շերտ, այդ պատճառով աստիճանի բարձրությունը կազմում է 6,93մ:

Բացահանքի մակաբացման ապարները 4704մ<sup>3</sup> ծավալով ներկայացված են այլովիալ առաջացումներով: Մակաբացման ապարները նախատեսվում է պահեստավորել բացահանքի հյուսիսային կողմի վերջնական եզրագծի սահմանից դուրս նրա և ապարատար ավտոճանապարհի միջև եղած տարածքում: Լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0,65հա, բարձրությունը 0,9մ, շեպի թեքման անկյունը 300: Վերին հարթակի մակերեսը կազմում է 0,55հա: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանականով:

Ելնելով աշխատավայրի ջրառատության պայմանից հանքավայրի շահագործման ժամանակ տեխնիկական ջրի մատակարարում պահանջվում է լցակույտի և ավտոճանապարհի ջրման համար: Խմելու ջրով բանվորները ապահովվում են անհատական տափաշներից:





Լցակույտի և ավտոճանապարհի ջրումը կատարվում է պայմանագրային կերպով ԴԱ3-52 ջրցան ավտոմեքենայով:

Մակարացման ապարները նախատեսվում է պահեստավորել բացահանքի հյուսիսային կողի վերջնական եզրագծի սահմանից դուրս նրա և ապարատար ավտոճանապարհի միջև եղած տարածքում: Լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0,65հա, բարձրությունը 0,9մ, շեպի թեքման անկյունը 300: Վերին հարթակի մակերեսը կազմում է 0,55հա: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանականով:

Շահագործման ավարտից հետո կատարվում է արտաքին լցակույտի վերին հարթակի հարթեցում բուլդոզերի միջոցով:

Բացահանքի մշակված տարածության հարթեցման աշխատանքների համար, ռեկուլտիվացիայի նախատեսված է 418200 ՀՀ դրամ գումար:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան կծախսվի 150000 դրամ գումար:

Հանքավայրի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունը հավանության է արժանացրել նախատեսվող գործունեությունը:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեզոյացման օջախների(աշխատանքային հրապարակները, հանքաստիճանները, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտ տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրցանում տարվա չոր և շոգ եղանակներին(օրական 2 անգամ),

- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով,

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող քետոնապատված փոսը,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,

- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,

- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,

- աշխատանքների կատարման ընթացքում բացառվում է անտառային որևէ ծառաթփատեսակների հատում իրականացնելու դեպքեր:





- խախտված տարածքների վերականգնում /ռեկուլտիվացիա/:  
Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

**Պատճառաբանական մաս.** Լոռու մարզի Ղուրսալի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Լոռու մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ



հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- Հանքավայրի շահագործումը ընթացքում բացառել էներգետիկայի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, տրանսպորտի գործառնական նշանակության հողամասի օգտագործումը:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

- Աշխատանքների կատարման ընթացքում բացառել անտառային որևէ ծառաթփատեսակների հատում իրականացնելու դեպքերը:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ կողմից ներկայացված Լոռու մարզի Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3 տեղամասի հարավային թևում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Հ. Մեսրոպյան